

խանը դանելու համար պէտք է մանրամասն հետազոտել Պորենացու քնազրի համապատասխան հատուածները՝ հիմնուելով ձեռագրական տարբերութեանց վրայ եւ եթէ հարկ լինի՝ յօրինելով ենթադրութիւններ այդ մասին: Այստեղ մեծապէս կարող է օժանդակել երգերի լեզուի հարադատութեան խնդիրը: Այսպէս օրինակ, «մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք» տողի մասին բազմահմուտն Հ. Յ. Գաթրըճեան գրում է. «Վերջին տողին գոնէ անարատ մնացած լինելուն երաշխաւոր կենալ չենք կրնար» (Պատմ. մատեն. հայոց, էջ 40): Այսպիսով քնազրական քննութեան հետ միասին անհրաժեշտ է լեզուական քննութիւն:

Մինչեւ այսօր եղած փորձերը բաւարար արդիւնք չեն տուած: Խնդիրը պէտք է քննութեան առնել մի նոր տեսակէտից: Այդ նոր տեսակէտն ինձ համար պատմական արտասանութեան տեսակէտն է: Մինչեւ այսօր վանկեր են հաշուել եւ կշռոյթներ են թաղրել՝ Գողթան երգերը կարդալով այսօրուան արտասանութեամբ: Բայց մի՞թէ Քրիստոսից առաջ Բ. դարում եւ նրանից յետոյ Ե. կամ Է. դարում հայոց բառերը նոյն արտասանութիւնն ունէին ինչ որ այսօր ունեն: Նախօրէն կարելի է ասել, որ հայրէ թէ: Ի՞նչպէս էին արտասանում օրինակ՝ «հանեալ» թէ «հանէալ», «արծուի» թէ «արծովի», «արքայն» թէ «արքայըն», «օրէն» թէ «աւրրէն»՝ քանի որ օ-ն աւ է. «տարցի» թէ «տարըցի», եւ այլն. ուրիշ խօսքով, ի՞նչ էր այդ բառերի տաղաչափական արժէքը՝ երկու՞ թէ երեք վանկ: Այս խնդիրը պէտք է նախապէս որոշուի եւ յետոյ միայն վանկերը հաշուի առնուին եւ տողերը հատածների բաժնուին: Պէտք է երգերի ամէն մի բառը ուսումնասիրուի իր պատմական հոլովոյթի մէջ եւ քերականական ամէն մի ձեւի արտասանութիւնը ճշդուի: Փորձի համար ես քննութեան կ'առնեմ այստեղ գրածս հատուածի առաջին տողը, ցոյց տալու համար այն տաժանելի աշխատանքը, որ պէտք է կատարուի Գողթան երգերի տաղաչափութիւնը դանելու համար:

Քեզ ասեմ այր քաջ Արտաչէս,  
ասում է Սաթենիկը: Ես հարցնում եմ. քեզ բառը, որ մի կանչ է, մի դիմում՝ տաղաչափական ի՞նչ կշիռ ունէր. նա մէ՞կ վանկ էր,

թէ՞ երկու: Ես երեւակայում եմ երկու դառնարած տարբեր բլուրների վրայ: Մէկը ձայն է տալիս միւսին. «Հանէս, էհէ՛յ Հանէ՛ս, կանչում են կանչո՛ւմ:— Ո՞ւմ, հարցնում է միւսը. Քե՛զ, պատասխանում է առաջինը: Ով անձամբ լսած է այսպիսի կանչ կամ ինքը կանչած է անձամբ՝ նա չի կարող ժխտել, որ առաջին «Հանէս»ը կարճ է. երկրորդը՝ երկար, իբր «Հանէէս». որ նշանակում է առաջինը երկու վանկի արժէք ունի, երկրորդը՝ երեք: Այդպէս են եւ առաջին ու երկրորդ «կանչում»ները: Այդպէս է «Ում» հարցումը, որ հնչում է իբր »Ո՞ւում»: Այդպէս է «քեզ» բառը, որ հնչում է իբր «քեեզ»: Արդ՝ վերի տողի մէջ երկու կանչի բառեր կան: Սաթենիկը Կուր դեպի ափին է «ի դարաւանդ մի մեծ», իսկ Արտաչէսը միւս ափին. եւ Սաթենիկը ձայն է տալիս մի ափից միւսը. «Արտաչէ՛ս, քե՛զ եմ ասում». պարզ չէ՞, որ այդ երկու բառերը պէտք է ոչ թէ չորս վանկ արժենան, այլ վեց վանկ: Եթէ մինչեւ իսկ նկատի չունենանք Դաւիթ Անյաղթի ասածը թէ է-ն «քննութեամբ երկայն» է (որ դուցէ յոյն կրթութեան մի ազդեցութիւն համարենք, քանի որ յունաց է-երից մինը միշտ երկար է) — բաւական է, որ նկատի ունենանք թէ Արտաչէս անունն այս տողի մէջ մի կանչ է, որ նրան համարենք երկար, իբր «Արտաչէէս»: «Ասեմ» եւ «քաջ» բառերը դիտողութեան տեղիք չեն տալիս: Բայց «այր» բառի մասին շատ ասելիք կայ:

Ի՞նչպէս էին արտասանում «այր» բառը՝ «այր» թէ «այըր»: Ի՞նչպէս էին ասում «հայր», «մայր» թէ՞ «հայըր», «մայըր»: «Հայր» բառը կշռում է յուն. pater պարսկ. padar բառերին: Երկու ձայնաւորի մէջ դանուած t կամ d հայերէնի մէջ դարձած է j, իսկ սկզբի p-ն դարձած է h, որով ենթադրական մի ձեւ ենք ստանում. հայար կամ հայէր: Այս բառի շեշտն անշուշտ առաջին վանկի վրայ էր, իբր հա՛յար կամ հա՛յէր, որի հետեւանքով երկրորդ ձայնաւորը պէտք է սրղէր եւ դառնար հա՛յըր: Հիմա մենք ասում ենք հա՛յր, բայց երգերի յօրինման ժամանակ կամ Ե. եւ է. դարերում արդեօք դեռ հայըր չէին արտասանում: Մինչեւ այսօր դեռ մեր գիւղացին դիմելով քահանային՝ ասում է.—